



ԱՐԴԻԻՆԱԻՏ ԳՈՅԱՊԱՅՔԱՐ

Չար. Ա. էջ 5

Համայնքային շուրջ տեղեկություններ փոխանցել: Իր ներկայ այցելությունը կը տարբերի նախորդին: Թե՛ ժամանակը աւելի երկար է շփումներ ունենալու համար եւ թե՛ ընթացքին արդէն Հայկական Համայնքային Համայնքային Հետզհետէ ամրապնդուած է իր կուտակած փորձառութեամբ: Անցած տարիներուն ընթացքին Համայնքային ունեցած է հազարաւոր աշակերտներ՝ աշխարհի զանազան երկիրներէն: Տեսակաւորուած են ուսուցման լեզուները: Թուրքիայէն ալ, թէկուզ սակաւաթիւ կան այս Համայնքային Հետեւողներ: Երևանի Զօրեան իր ժամանումէն վերջ նախընթաց օր առիթն ունեցած է մէկտեղուելու Համայնքային Համայնքային թրքաՏայ ուսանողներուն հետ: Միտքաբան սանուց միութեան երկրորդ տակ տեղի ունեցած է այդ հանդիպումը, անմիջական զրոյցի մը ձեւաչափով: Կը նախատեսուի, որ վաղն ալ տեղի ունենայ երկրորդ հանդիպում մը, այս անգամ աւելի ընդլայնուած կազմով: Մինչ այդ, Երևանի Զօրեան ԺԱՄԱՆԱԿ-ի միջոցաւ կոչ ուղղեց, որպէսզի թրքաՏայերը անմասն չմնան Համայնքային Համայնքային այս եղակի հնարաւորութենէն եւ առաւելագոյն չափով օգտուին՝ քայլ պահելով աշխարհով մէկ արուած հայութեան այլ համայնքներուն նման:

Երէկ յետմիջօրէին, հաճոյքն ունեցանք խմբագրատան մէջ հիւրընկալելու Երևանի Զօրեանը, որուն կ'ուղեկցէր մեր համայնքէն Մարի Ազապա: Հաճելի զրոյցի ընթացքին ան մեզի բացատրեց ՀԲԸՄ-ի Հայկական Համայնքային Համայնքային արձանագրած նուաճումները: Ան ըսաւ, թէ Համայնքային Համայնքային դասարաններէն ներս զանազան երկիրներէ եւ սերունդներէ մարդիկ կը ձգտին ճանչնալ Հայոց լեզուն, պատմութիւնն ու մշակոյթը: Ափուրջի մէջ զանազան դպրոցներ նոյնիսկ որպէս ծրագիր կ'ուրացնեն այս Համայնքային դասերը՝ մանաւանդ անոնք, որոնք դժուարութիւններ կ'ապրին արեւմտահայերէնով դաստանդելու իմաստով, մարդու մի սահմանափակութեան հետեւանքով կամ այլ պատճառներով: Երևանի Զօրեանի բացատրութիւններով՝ Համայնքային Համայնքային ուսանողները, որպէս դասընկեր, աշխարհի զանազան երկիրներուն մէջ նստած իրարու հետ կը մշակեն նաեւ յարակից կապեր: Սա եւս հետաքրքրական ձեւեր երկուստեքու համար գետին կը պատրաստէ:

Հայկական Համայնքային Համայնքային Հայոց արդի իրականութեան մէջ իսկապէս եզակի փորձառութիւն մըն է, ուշագրաւ նախաձեռնութիւն մը, որու արդիւնքները չափել հնարաւոր պիտի ըլլայ երկարամիակէտ: Ցարդ տարուած աշխատանքին լոյսին տակ կարելի է դիտարկել նաեւ, թէ թէկուզ Համայնքային Հարթութեան վրայ, սակայն այս Համայնքային պարագային տեսականի եւ գործնականի համատեղութիւնը կ'ապահովուի բաւական բարձր համեմատութեամբ:

Հին ՈՃՈՎ ՈՒ ԱՐԴԻ ԶԵՒՈՎ

Չար. Ա. էջ 5

Երբայց վերանորոգութեան ծրագիրը ու Փակ շուկան երէկ վերստին բացաւ իր դռները ժողովուրդին առջեւ:

Առաջին տպաւորութեամբ տարուած աշխատանքին արդիւնքը դրական էր: Հին ոճին մէջ արդի ձեւով առեւտուրը պիտի շարունակուի Երևանի Փակ շուկայի երկրորդ տակ: Բազալի կեդրոնին պատմական առեւտուրի կեդրոնը պիտի շարունակէ ծառայութիւն մատուցել որպէս ժամանակակից հանրախանութ մը, ուր կարելի է գտնել գրեթէ ամէն ինչ:

Երևանցիներն ալ առաջին իսկ օրէն սկսեալ արդէն սկսան փութալ իրենց աւանդական գնումի միջավայրը, որ ներկայիս բարեկարգուած է ու դարձած՝ անհամեմատելիօրէն մաքուր, ճոխ ու ժամանակակից պայմաններու համապատասխան:

ՄՈՐ ԿԱՊՐԻԷԼԻ ՏԱՐԱԾՔԸ

Չար. Ա. էջ 5

Հուրդի դեկավար Մայիտ Սուսին այս առիթու յայտարարեց, թէ 2013 թուականը շատ կարեւոր տարի մը հանդիսացած է իրենց տեսակէտէ: Տեղական մամուլէն զանազան թերթերու մէջ լոյս տեսած են իր խօսքերը, ըստ որոնց այս տարի ասորիները վերստին ունեցան վարժարան բանալու իրաւունք, դասագիրքերէն դուրս թողուցանան ասորիներու վերաբերեալ սխալ տեղեկութիւնները, իսկ հիմա ամենապարեւորը՝ Մոր Կապրիէլը վերադարձընցաւ իրենց:

Իր կարգին, Մոր Կապրիէլի վանքի վազբֆին ղեկավարը՝ Քուրեանքուս Երկունն ալ ըսաւ, թէ տեղական դատարանները սիշտ վճիռներ կ'արձակէին իրենց ի նպաստ, սակայն Վճռաբեկ ատեանը ամէն անգամ կը բեկանէր այդ վճիռները: Վարչապետ Էրտողանի յայտարարութիւնները արագացուցին վանքի սեփականութեան իրաւունքի իրենց վերադարձման գործընթացը:

Վազբֆներու ընդհանուր տնօրէն Ատնան Էրթէմն ալ երկուսին ժողովէն վերջ սաբբած մամուլայ ասուլիսին ընթացքին նշեց, թէ Մոր Կապրիէլի վազբֆը յառաջիկայ շրջանին կրնայ կայունացնել թուրքի արձանագրութիւնը եւ սեփականութեան իրաւունքի վերահաստատումը ապահովել:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Չար. Ա. էջ 5

Հրաւիրեց, թէ Թուրքիա-Հնդկաստան յարաբերութիւնները ունին պատմական խոր արմատներ: Ըստ Կիւլի, երկու երկիրները ապահոված են դիրք մը, որով կը հանդիսանան տարածաշրջանի ներս վերելքի կեդրոններ: Երկկողմանի նիւթերուն առընթեր, երկու երկիրները Համապարփակութեան լուրջ հեռանկարներ ունին Ասիոյ տարածաշրջանէն ներս, «G-20»-ի շրջագծով, ինչպէս նաեւ Համաշխարհային օրակարգի բազմաթիւ նիւթերուն շուրջ:

Advertisement for TBMM MİLLİ SARAYLAR VERA YILDIZ PARK PALANGA CAD. YILDIZ PARKI, YILDIZ PORSELEN İÇİ 34349 BEŞİKTAŞ - İSTANBUL. Includes phone number 0212 243 56 39 and a large decorative graphic with the letter 'd' and '100 years'.

Advertisement for Vazken (CENAZE İŞLERİ ORGANİZASYONU) with address: Ergenekon Cad. Bilezikçi Sok. No. 58-D Pangaltı, Şişli, 34375, İstanbul. Includes phone number 0212 248 48 55.